Ծրագիրն իրականացնում է Հայկական Կարիտասի Երևանի ենթագրասենյակը

Գրասենյակի պատասխանատու
Մովսես Հակոբյան
Ծրագրի ղեկավար
Տիգրանուհի Տարախչյան
Չայկովսկի 34, բն. 23
Երևան, Հայաստան
Հեռ.՝ (37410) 56 57 66
Էլ. փոստ՝ m.hakobyan@foy.cararm.am
t.tarakhchyan@foy.cararm.am

Տեղեկատվություն կարող եք ստանալ նաև հետևյալ հասցեներով

Հայկական Կարիտասի Գլխամասային Գրասենյակ
Ծրագրի օգնական
Լիանա Եֆրեմյան
Հ. Սարգսյան 8, նրբանցք 3
3118, Գյումրի, Հայաստան
Հեռ.՝ (374312) 5 72 01
Ֆաքս՝(374312) 5 78 49
Էլ. փոստ՝ caritas@cararm.am
l.yefremyan@cararm.am

Հայկական Կարիտասի Գավառի ենթագրասենյակ
Գրասենյակի պատասխանատու
Անդրանիկ Եղիազարյան
Թումանյան փող. 22
378630 Գավառ, Հայաստան
Հեռ.՝ (374264) 2 17 94, (374264) 2 67 21
Բջջ.՝ (37491) 21 92 24
Էլ. փոստ՝ a.yeghiazaryan@fog.cararm.am

GOVERNMENT OF LIECHTENSTEIN

ՍԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ

Caritas AUSTRIA

ՄԻԳՐԱՑԻԱ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությունը իրականացնում է «Միգրացիա և Զարգացում» ծրագիրը Լիխտենշտեյնի կառավարության և Ավստրիական Կարիտասի ֆինանսական աջակցությամբ:

ՍԻՐԵԼԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑ,

Եթե դուք երկար ժամանակ Հայաստանից բացակայելուց հետո վերադարձել եք հայրենիք և ցանկանում եք ձեր սոցիալ-տնտեսական վիճակը բարելավելու նպատակով զբաղվել բիզնեսով, այդ հարցում ձեզ կօգնի «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությունը, որը Լիխտենշտեյնի կառավարության և Կարիտաս Ավստրիայի աջակցությամբ իրականացնում է «Միգրացիա և Զարգացում» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում Եվրոպական միության երկրներից կամավոր վերադարձողներին հնարավորություն կտրվի հիմնելու սեփական բիզնես, որի համար Հայկական Կարիտասը կարող է նրանց



- տրամադրել խորհրդատվություն բիզնես սկսելու և զարգացնելու համար
- աջակցել բիզնես պլանների կազմման գործում
- տրամադրել փոխառություն բիզնես սկսելու համար
- փոխառություն ստանալու համար պետք է ներկայացվի բիզնես ծրագիր
- փոխառությունը տրվում է 0% տոկոսադրույքով
- փոխառության մարման ժամկետը 1 - 2 տարի, կախված բիզնեսից
- օգնել բիզնեսի գրանցման և պետական մարմինների հետ բիզնեսին առընչվող այլ հարաբերությունների կարգավորելու հարցերում
- օգնել բիզնեսի կառավարման, հաշվետվությունների պատրաստման հարցերում
- անհրաժեշտության դեպքում կազմակերպել վերառակավորման դասընթացներ
- ապահովել անհրաժեշտ ուսուցումներով, ուղեցույցներով

և տեղեկատվությամբ:

Ձեռնարկատիրական գործունեություն սկսելուց առաջ ծանոթացեք բիզնեսի ընտրության և գրանցման հետ կապված որոշ տեղեկություններին, որը ձեզ կօգնի ճիշտ կողմնորոշվելու և հաջող գործ սկսելու հարցում:

Հայաստանում ձեռնարկատիրական գործունեության հիմնական ոլորտներն են՝

- **Գյուղատնտեսություն** (անասնապահություն, այգեգործություն, բանջարաբոստանային կուլտուրաների աճեցում, գյուղատնտեսական մթերքների վերամշակում և այլն)
- **Ծառայությունների** բնագավառ (հասարակական սնունդ, սպասարկման և վերանորոգման արհեստանոցներ, տրանսպորտային ծառայություններ և այլն)
- **Առևտուր** (մնածախ և մանրածախ)
- **Արտադրություն** (ապրանքի, գույքի, մթերքի արտադրություն և այլն)

Ձեռնարկատիրական գործունեության ոլորտի ընտրությունը կատարելուց հետո անհրաժեշտ է որոշել նրա կազմակերպաիրավական ձևը: Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրական գործունեություն սկսելու համար անհրաժեշտ է գրանցվել որպես

- անհատ ձեռներեց (ԱՁ) կամ
- առևտրային իրավաբանական անձ (ԻԱ):

Անհատ ձեռներեցը ֆիզիկական անձ է, որն իրավունք ունի իր անունից և իր ռիսկով զբաղվել տնտեսական գործունեությամբ բիզնեսի գրեթե բոլոր բնագավառներում: ԱՁ-ն օժտված է լիակատար պատասխանատվությամբ, այսինքն իր գործունեության, պարտավորությունների ու պարտքերի

համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով: Ներկայումս Հայաստանում գործող փոքր բիզնեսների մեծ մասը գրանցված են որպես անհատ ձեռներեց, որը բիզնեսը գրանցելու ամենաարագ և ամենահեշտ ձևն է: ԱՁ գրանցվող բիզնեսի չափերի հետ կապված ՀՀ գործող օրենսդրությամբ ոչ մի սահմանափակում չկա: ԱՁ-ի համար հաշվապահական պահանջները ավելի թեթև են և հարկային թղթաբանությունը ավելի հեշտ է:

Իրավաբանական անձ. Կախված հիմնադիրների կազմից, մասնակիցների իրավունքների բնույթից Հայաստանում կարող են հիմնադրվել առևտրային իրավաբանական անձանց հետևյալ տեսակները

- Ընկերություններ
- Կոոպերատիվներ
- Ընկերակցություններ

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (ՍՊԸ) մեկ կամ մի քանի անձանց կողմից հիմնադրած իրավաբանական անձ է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է ընկերության կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի: ՍՊԸ-ի մասնակից կարող են լինել ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձինք: ՍՊԸ-ի մասնակիցների թիվը չպետք է գերազանցի 49-ը, այլապես այն մեկ տարվա ընթացքում պետք է վերակազմավորվի բաժնետիրական ընկերության: ՍՊԸ մասնակիցները պատասխանատվություն չեն կրում ընկերության պարտավորությունների համար: ՍՊԸ մասնակիցները պարտավորություն են կրում իրենց բաժնեմասի անվանական արժեքի չափով: ՍՊԸ-ն ներկայումս ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամենատարածված տեսակներից է:

Լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերությունը (ԼՊԸ) մեկ կամ մի քանի անձանց կողմից հիմնադրած

իրավաբանական անձ է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է ընկերության կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի: Լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցները ընկերության պարտավորությունների համար պատասխանատվություն են կրում իրենց գույքով՝ ընկերության կանոնադրությամբ բոլորի համար միանման որոշված իրենց ավանդների արժեքի բազմապատիկի չափով:

Բաժնետիրական ընկերությունը (ԲԸ) այն իրավաբանական անձն է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է որոշակի թվով բաժնետոմսերի: Բաժնետիրական ընկերությունները լինում են բաց և փակ: Բաց բաժնետիրական ընկերությունը (ԲԲԸ) անցկացնում է իր թողարկած բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն և ազատ վաճառք: Փակ բաժնետիրական ընկերության (ՓԲԸ) բաժնետոմսերը բաշխվում են միայն նրա հիմնադիրների միջև և դրանց փոխանցումը այլ անձանց արգելվում է: Բաժնետիրական ընկերությունը կարող է հիմնադրվել ինչպես ֆիզիկական անձանց, այնպես էլ իրավաբանական անձի կողմից: Բաժնետիրական ընկերությունը կարող է հիմնադրվել մեկ անձի կողմից կամ կազմված լինել մեկ անձից՝ բաժնետիրոջ կողմից բոլոր բաժնետոմսերը ձեռք բերելու դեպքում: Բաժնետիրական ընկերության մասնակիցները պատասխանատվություն չեն կրում ընկերության պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

Արտադրական կոոպերատիվը (ԱԿ) քաղաքացիների և իրավաբանական անձանց անդամության վրա հիմնված ոչ իր անդամների գույքային փայավճարների միավորման միջոցով մասնակիցների նյութական և այլ կարիքների բավարարման նպատակով ստեղծված կամավոր միավորում է: Կոոպերատիվը ոչ միայն կապիտալների միավորում է, այլ համատեղ

գործունեություն իրականացնելու նպատակով անձանց միավորումն է: Կոոպերատիվի կառավարման բարձրագույն մարմինը նրա անդամների ընդհանուր ժողովն է: Կոոպերատիվի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

Լիակատար ընկերակցությունը (ԼԸ) ներառում է միայն լիակատար մասնակիցներ (լիակատար ընկերներ), որոնք ընկերակցության անունից զբաղվում են ձեռնարկատիրական գործունեությամբ և իրենց պատկանող գույքով պատասխանատվություն են կրում կազմակերպության պարտավորությունների համար: Լիակատար ընկերակցության մասնակիցներ կարող են լինել միայն անհատ ձեռնարկատերերը և (կամ) առևտրային կազմակերպությունները: Անձը կարող է լինել միայն մեկ լիակատար ընկերակցության անդամ: Լիակատար ընկերակցության շահույթը բաշխվում է մասնակիցների միջև իրենց բաժնեմասերի համաչափությամբ:

Վստահության վրա հիմնված ընկերակցությունը (ՎԸ) դա այն տնտեսական ընկերակցությունն է, որում ընկերակցության անունից ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող և իրենց գույքով ընկերակցության պարտավորությունների համար պատասխանատվություն կրող մասնակիցների (լիակատար ընկերներ) հետ միասին կան մեկ կամ մի քանի մասնակից ավանդատուներ (սահմանափակ մասնակիցներ կամ կոմանդիտիստներ), որոնք իրենց ներդրած ավանդների գումարների սահմաններում կրում են ընկերակցության գործունեության հետ կապված վնասների ռիսկը և չեն մասնակցում ընկերակցության իրականացրած ձեռնարկատիրական գործունեությանը և կառավարմանը: Անձը կարող է լիակատար ընկեր լինել միայն մեկ վստահության վրա հիմնված ընկերակցությունում: Լիակատար ընկերակցության մասնակիցը չի կարող լիակատար ընկեր լինել վստահության վրա հիմնված ընկերակցությունում:

Այժմ դուք ծանոթ եք ՀՀ-ում գործող ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների կազմակերպա-իրավական ձևերին, և կարող եք կատարել ընտրություն ձեր բիզնեսը սկսելու համար: Ստորև հակիրճ կներկայացնենք դրանց գրանցման ընթացակարգը:

Անհատ ձեռնարկատիրոջ (ԱՁ) գրանցումը

Ձեր բիզնեսը գրանցելու համար որևէ բանկում վճարեք 3000 դրամ պետական տուրք և Պետական ռեգիստրի գրասենյակ ներկայացրեք

- գրանցման դիմում (դիմումի ձևը կստանաք պետռեգիստրի գրասենյակում)
- անձնագրի պատճենը
- մեկ 3x4 չափի լուսանկար
- պետական տուրքի վճարման անդորրագիրը

Պետական ռեգիստրը դիմելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է որոշում ԱՁ-ի պետական գրանցման մասին: Դիմումը մերժելու դեպքում մեկ աշխատանքային օրվա ընթացքում ձեզ պետք է տրվի գրավոր բացատրություն: Գրանցվելու դեպքում ձեզ կտրվի պետական գրանցման վկայական:

Իրավաբանական անձի (ԻԱ) գրանցումը

Իրավաբանական անձ գրանցելու համար նախապես անհրաժեշտ է անցկացնել հիմնադիրների ժողով, որի ժամանակ որոշվում է ստեղծել իրավաբանական անձ: Ժողովին պետք է մասնակցեն բոլոր հիմնադիրները: Այս ժողովը պետք է արձանագրվի և արձանագրությունը պետք է ստորագրվի ժողովի նախագահի և քարտուղարի կողմից (մեկ հիմնադիրի դեպքում ստորագրում է միայն ինքը): Այնուհետև պետք է մշակել իրավաբանական անձի կանոնադրությունը և որոշել կազմակերպության անվանումը: Իրավաբանական

անձ գրանցելու համար պետական տուրքը 12000 դրամ է, իսկ անվանումը հաստատելու համար՝ 5000 դրամ: Ընկերության անվանման գրանցումը կատարվում է Պետական ռեգիստրի գրասենյակում: Պատասխանը կտրվի երկու օրվա ընթացքում: Եթե ձեր ընտրած անվանումը մերժվի, ապա 5000 դրամ պետական տուրքը ուժի մեջ կլինի այլ անվանում գրանցելու համար: Այս վճարումները կատարեք որևէ բանկում և Պետական ռեգիստրի գրասենյակ ներկայացրեք հետևյալ փաստաթղթերը

- Դիմումի ձևը
- Գրանցման համար պետական տուրքի անդորրագիրը
- Ընկերության անվանման գրանցման վկայականը
- Ընկերության կանոնադրության 2 օրինակ
- Հիմնադիրների ժողովի արձանագրությունը

Իրավաբանական անձի գրանցելու մասին դիմումը հաստատվում կամ մերժվում է հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Մերժման դեպքում դուք հինգ օրվա ընթացքում կստանաք գրավոր ծանուցում: Գրանցվելու դեպքում տրվում է ԻԱ գրանցման վկայական:

Պետական մարմիններում հաշվառման կանգնելը

Եվ որպես անհատ ձեռնարկատեր և որպես իրավաբանական անձ գրանցվելուց հետո երեսնօրյա ժամկետում անհրաժեշտ է հարկային ծառայությունում հաշվառվել որպես հարկ վճարող և ապահովագիր: Դրա համար տարածքային հարկային տեսչությունում պետք է լրացնել համապատասխան հաշվառման ձևը: Հաշվառման համար իրավաբանական անձը պետք է ներկայացնի նաև գրանցման վկայականի և կանոնադրության պատճենները, իսկ անհատ ձեռնարկատերը գրանցման վկայականի և անձնագրի պատճենները: Հարկային

մարմինը ձեզ կտրամադրի հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), որը ութանիշ թիվ է, որը պետք է տեղ գտնի ձեր բոլոր հարկային փաստաթղթերի վրա:

Անկախ բիզնեսի իրավակազմակերպական ձևից դուք պետք է կատարեք սոցիալական վճարներ, որի համար պետք է հաշվառվել Հարկային ծառայությունում նաև որպես ապահովագիր: Հաշվառվելու համար հարկային ծառայություն պետք է ներկայացնել պետական ռեգիստրի գրանցման վկայականի և կանոնադրության պատճենները, ՀՎՀՀ տեղեկանքը և լրացնել ապահովագիրի հաշվառման ձևը:

ՁեռնարկությանԿնիքը

Բոլոր իրավաբանական անձինք պետք է կնիք ունենան: Անհատ ձեռնարկատերերի համար կնիք ունենալը պարտադիր չէ, սակայն որոշակի գործարքներ իրականացնելիս շատ կարևոր է այն ունենալ: Կնիք պատվիրելու համար նախ պետք է ՀՀ ոստիկանությունից ստանալ թույլտվություն, որի համար ոստիկանության բաժանմունք պետք է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը

- լրացված դիմումի ձևը՝ կնիք պատվիրելու թույլտվություն ստանալու համար
- պետական գրանցման վկայականի պատճենը
- կանոնադրության պատճենը
- ՀՎՀՀ տեղեկանքի պատճենը
- կնիք պատվիրելու թույլտվության համար պետական տուրքի վճարման անդորրագիրը (6000 դրամ, վճարված որևէ բանկում)

Թույլտվությունը սովորաբար տրվում է մեկ օրվա ընթացքում: Թույլտվությունը ստանալուց հետո կարող եք պատվիրել կնիքը "Կնիք" ՓԲԸ-ում, (հասցեն՝ Երևան, Երվանդ Քոչարի 5):

Լիցենզավորում

Անկախ բիզնեսի գրանցման իրավակազմակերպական ձևից տնտեսական գործունեության որոշ տեսակների համար անհրաժեշտ է ունենալ լիցենզիա: Լիցենզավորվող գործունեության տեսակները որոշված են ՀՀ լիցենզավորման մասին օրենքով: Եթե ձեր գործունեության համար անհրաժեշտ է լիցենզիա, այն կստանաք ՀՀ ֆինանսների նախարարությունից: Դրա համար պետք է ներկայացնել

- դիմում
- պետական գրանցման վկայականի պատճենը
- կանոնադրության պատճենը
- լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը
- ՀՎՀՀ տեղեկանքի պատճենը

Մաքսային ծառայությունում հաշվառվելը

Մաքսային ծառայությունում հաշվառվում են միայն այն անձինք, որոնք զբաղվելու են արտահանմամբ և (կամ) ներմուծմամբ: Ձեր տարածաշրջանի մաքսատանը հաշվառվելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում արտահանման/ներմուծման գործունեություն իրականացնելու մասին
- պետական գրանցման վկայականի պատճենը
- կանոնադրության պատճենը
- ՀՎՀՀ տեղեկանքի պատճենը
- տեղեկանք բանկից՝ ձեր հաշվեհամարի վերաբերյալ